*Հայտարարություն*

*Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի Ֆիզիկայի (18 դասաժամ), ԹԳՀԳ և Ինֆորմատիկայի (9 դասաժամ), Հայոց լեզու և գրականություն (8 դասաժամ), Երաժշտություն (3,5 դասաժամ), Կերպարվեստ (3,5 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղեր: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:*

*Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝*

*1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),*

*2.Փաստաթուղթ (դիպլոմ)՝<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,*

*3.Անձնագրի պատճենը,*

*4.Ինքնակենսագրություն (Ձև 5),*

*5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացնող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),*

*6.Մեկ լուսանկար՝3x4 չափի,*

*7.Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,*

*8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:*

*Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:*

*Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ՝ ամեն օր՝ժամը 10.00-15.00՝բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:*

*Մրցույթը տեղի կունենա 2024թ. սեպտեմբերի 18-ին ժամը 14.00-ին Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում:*

*Տեղեկությունների համար զանգահարել՝/0285-2-55-92/ հեռախոսահամարով:*